



## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Ձեկուցող՝ համայնքի ղեկավար Յ.Գ.Նավասարդյան

2014 թվականի հուլիսի 18-ին Արմավիրի մարզի Շահումյան համայնքում տեղի ունեցավ ժողով՝ մասնակցությամբ մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչ Վարազդատ Սկրտչյանի, Շահումյան համայնքի ավագանիներ Ս.Պողոսյանի, Կ.Եղիազարյանի, Ե.Նավասարդյանի, Վ.Համբարձումյանի, Ա.Գրիգորյանի, Ա.Հարությունյանի, Բ. Սադոյանի և համայնքի բնակիչների:

Հարգելի պարոն Սկրտչյան, ավագանու անդամներ և հյուրեր, ձեզ եմ ներկայացնում 2014 թվականի առաջին կիսամյակի բյուջեի կատարման հաշվետվությունը:

Ինչպես գիտեք, համայնքի բյուջեի միջոցով իրականացվում է համայնքի կենսագործունեությունն ապահովող ֆինանսատնտեսական քաղաքականությունը, ուստի ինձ համար կարևոր է ձեր կարծիքը բյուջեի գործընթացի մասին:

Շահումյան համայնքի գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 9 աշխատողներից, որից 6-ը հանրային ծառայողներ են, 2-ը հայեցողական, 1-ը տեխսպասարկման անձնակազմ և գյուղապետարանի ենթակայության մշակույթի տան 8 աշխատողներ:

Իմ հանձնարարությամբ Աշխատակազմի քարտուղարի կողմից իրականացվել է գյուղապետարանի աշխատակազմի անխափան աշխատանքը: Նախապատրաստվել է համայնքի ավագանու նիստերի օրակարգը, նիստում քննարկվող հարցերի նախագծերը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ օրենքներով և իրավական ակտերով, հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է պետության կողմից պատվիրակված և կամավոր լիազորություններ:

Հրավիրվել և վարվել է ավագանու 4 նիստ, որից 3-ը հերթական, 1-ը արտահերթ:

Աշխատակազմի քարտուղար Գ.Համբարձումյանը, պահպանելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, ժամանակին ապահովել է համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների առաքումը մարզպետարան:

Կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն համայնքի ղեկավարի մոտ: Ընդունելության եկած քաղաքացիներին տրվել է սպառիչ պատասխան:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանից և այլ կազմակերպություններից ստացված գրություններին պատասխանվել է ժամանակին և ապահովվել է այդ գրություններում նշված պահանջների կատարումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներով՝ իմ կողմից իրականացվել է օրենքով սահմանված մի շարք պարտադիր լիազորություններ: Հաշվետու ժամանակաշրջանում վերահսկողություն է իրականացվել հողի հարկի և գույքահարկի հարկատեսակների հավաքագրման աշխատանքների նկատմամբ:

2014 թվականի առաջին կիսամյակի կտրվածքով բյուջեի եկամուտները կազմել են 16255.6 հազ. դրամ, որի հիման վրա էլ մեր կողմից իրականացվել է պետության կողմից պատվիրակված և համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունները:

Հողի հարկը առաջին կիսամյակի կտրվածքով կազմել է 2250.0 հազ. դրամ, հավաքագրվել է 875.3 հազ. դրամ, կատարողականը 38.9 %:

Հողի վարձակալության վճարը կազմել է 100.0 հազ. դրամ, հավաքագրվել է 0. հազ. դրամ, կատարողականը 0 %:

Գույքահարկ փոխադրամիջոցների համար կազմել է 550.0 հազ. դրամ, հավաքագրվել է 730.3 հազ. դրամ, կատարողականը 132.7 %:

Գույքահարկ շենք -շինությունների համար կազմել է՝ 150.0 հազ. դրամ, հավաքագրվել է 3.4 հազ. դրամ, կատարողականը 2.3 %:

Տեղական տուրքերի գծով համայնքի տարածքում առևտրի կետերի ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար սահմանված 36.0 հազ. դրամի դիմաց առաջին կիսամյակի կտրվածքով հավաքագրվել է 24.0 հազ. դրամ, կատարողականը 56.6%:

Գազ և վառելիքաքսայուղային նյութեր՝ 75.0 հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 0 հազ. դրամ, կատարողականը 0 %:

Առաջին կիսամյակի կտրվածքով սեփական եկամուտների հավաքագրման կատարողականը պլանի նկատմամբ /հողի հարկ, փոխադրամիջոցի գույքահարկ, շենք-շինությունների գույքահարկ, վարձակալական հողի հարկ/ կազմել է 54.5%:

Քաղաքացիների, տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվել է համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունները:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- համայնքում աղբահանությունը բնականոն կատարվում է ամիսը 3 անգամ՝ էջմիածնի քաղաքապետարանի բնակկոմունալ վարչության հետ կնքված պայմանագրի հիման վրա ,
- սահմանված կարգով բնակչությանը իրազեկվել է ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների, կառուցապատման հետ կապված օրենսդրական փոփոխությունների մասին,

Հողօգտագործման բնագավառում՝

իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

Կրթության և մշակույթի բնագավառում իմ կողմից մշտական ուշադրության է արժանանում գյուղի միջնակարգ դպրոցը: Գյուղի դպրոցում իրականացվող միջոցառումները արժանանում են գյուղապետարանի աջակցությանը:

Առաջին դասարանցիներին Ապարանի տառերի պուրակում «Հրաժեշտ այրբենարանին» տառահանդեսի և խնջույքի կազմակերպման համար տրամադրվել է 250000/երկու հարյուր հիսուն հազար/ դրամ:

Շրջանավարտներին «Վերջին զանգի» և ավարտական երեկոյի կազմակերպման համար համայնքի բյուջեից տրամադրվել է 400000/չորս հարյուր հազար/ դրամ:

Համայնքի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու բակում նշվել է «Տեառնընդառաջի» տոնակատարությունը, որի համար համայնքի բյուջեից հատկացվել է 145000 /մեկ հարյուր քառասունհինգ հազար/ դրամ գումար: Միջոցառմանը մասնակցել են համայնքի երեք նորապսակ զույգ, ներկա են եղել համայնքի բնակիչներ, բակում վառվել է տոնակատարության խորհրդանիշ խարույկ և տրվել է արժեքավոր նվերներ և ծաղկեփնջեր: Եկեղեցու կողմից նորապսակները ստացել են մարգարտյա վզնոցներ, եկեղեցու բարերար Կարեն Հովհաննիսյանի կողմից տրվել է ոսկյա կուլոններ՝ Մարիամ Աստվածածնի պատկերով:

Մարտի 8-ի տոնի կապակցությամբ իմ կողմից ուշադրության են արժանացվել համայնքի մանկավարժները, բուժաշխատողները: Գյուղապետարանի և մշակույթի տան կին աշխատակիցների համար համայնքի բյուջեից տրամադրվել է 210000 /երկու հարյուր տաս հազար/ դրամ գումար՝ նվերներ ձեռք բերելու նպատակով :

Մայիսյան տոների կապակցությամբ համայնքի ՀՄՊ վետերանին, արցախյան պատերազմում զոհվածի, ԼՂՀ-ում ծառայության ընթացքում զոհվածի և վիրավորված զինծառայողների ընտանիքներին համայնքի բյուջեից տրամադրվել է 300000/երեք հարյուր հազար/ դրամ:

«Հայոց բանակի» տոնի կապակցությամբ համայնքի 13 զինծառայողների ընտանիքներին տրամադրվել է 260000 /երկու հարյուր վաթսուներեք հազար/ դրամ:

2014 թվականի մայիս ամսին Քրոնիմետ բարեգործական կազմակերպության կողմից ավարտին է հասցվել Շահումյանի նորակառույց մանկապարտեզի շենքը:

Գյուղատնտեսության բնագավառում կազմակերպվել է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքները: 2014 թվականի մարտի 31-ից ապրիլի 2-ը ընկած ժամանակահատվածում համայնքի վարչական տարածքում ցրտահարության հետևանքով տուժած հողօգտագործողներին մարզպետարանի կողմից տրամադրվել է սերմեր և բաշխվել տուժած տնտեսություններին:

ՀՀ կառավարության 10.06.2014 թվականի թիվ 532-Ն որոշմամբ գիջվեց ցրտահարությունից տուժած 45 տնտեսությունների հողի հարկը 261200 դրամի չափով:

Համայնքն ունի մի շարք հիմնախդիրներ, որոնցից են՝

- մշակույթի տան վերանորոգում,
- գյուղապետարանի շենքի վերանորոգում,
- համայնքը չունի գլխավոր հատակագիծ,
- գյուղատնտեսական տեխնիկայի բացակայություն,
- մանկապարտեզի գույքի ձեռք բերում և շենքի պարսպապատում,
- ոռոգման ջրի ներտնտեսային ցանցի 4 կմ խողովակների ձեռքբերում:

Շահումյան համայնքի ղեկավար



Հ.Գ.Նավասարդյան